

մէ իշխանները, ազատները ու տիրապետողները (Հայաստանի արարած ժողովուրդը): Իսկ Երեսույթի գործակալներէն մէկը, որ կը կոչուէր ալ-Ալա իպըն Ահմատ, զնաց վանք մը՝ Սիսականի մէջ՝ որ ծանօթ էր Բաթակներու վանք անունով, զոր Հայաստանի քրիստոնեաները միշտ կը մեծարէին ու անոր ընծաներ կը նուիրէին. անկէջ առաւ ինչ որ գտաւ ու նեղեց բնակողները:

Իշխաններու աչքին ծանր եկաւ այդ արարքը. իրարու դրեցին, զիրար յորդորեցին որ ապստամբին ու ոտքի ելլեն: Գլուհեցին խռովները որ բարբարոսներ են, եւ կը ճանչցուն Արթան (խրթնախօս) անունով, որ յարձակին Երեսույթի վրայ, ու զանոնք լեցուցին անոր դէմ, որովհետեւ իրենց Բազարատ իշխանը գերի տարած էր: Անոնցմէ ամէն մարդ, նոյնիսկ տիրապետողները (Հայաստանի արարած ժողովուրդը) անոնց օգնութեան զրկեցին, ձիաւորներ ու հետեակներ, որոնք յարձակեցան վրան՝ Տարօնի մէջ՝ մինչ իր ընկերները ցրուած էին զիւղերու մէջ: Զինքը սպաննեցին, ու գրաւեցին ինչ որ կար իր բանակին մէջ:

Այն ատեն հաւատացեալներու ամերան ալ-Մուհաուաքըը Ալալահ՝ Հայաստանի կառավարիչ կարգեց Մեծն Բուղա, որ երբ Բաղէշ եկաւ, ձերբակալեց Մուսա իպըն Զուրարան, որ Բազարատի վրէժը լուծելու համար փախաբաժ էր Երեսույթի սպանութիւնը ու օգնած էր անոր իրագործման: Բուղա պատերազմեցաւ խռովեցիներուն դէմ. անոնցմէ շատեր սպաննեց ու շատեր ալ գերի բռնեց: Յետոյ պաշարեց Աշոտը՝ Վասպուրականի իշխանը, որ Աղբակի մէջ էր եւ Համդա իպըն Գադիկի որդին էր: Ստիպեց զինքը իջնել իր բերդէն ու զրկեց զինքը Սամաուս:

Բուղա յետոյ քալեց դէպի Ճուրղան (Վրաստան), յաղթեց Իսհակ իպըն Իսմա-

իլի ու խաչեց զանիկա: Նուաճեց Ճուրղանն ու հետն առաւ Առանցիները, Հայաստանի չորս կողմը եղողները, Սիսականցիները, խռովասէր ու ապստամբ քրիստոնեաները եւ ուրիշներ, մինչեւ որ բարեկարգուեցաւ երկիրը այնպիսի ձեւով՝ որուն նմանը երբեք չէր եղած: Յետոյ մեկնեցաւ դէպի Սամաուս 241ին (855) (էջ 209-212):

Ի՛շ. — Վարդան՝ Ամր իպըն ալ-Ասի ազատագործը. —

Ինծի պատմեց Ապու Այուպ Բաքրացին՝ լսելով Ապուր-Ղաֆֆար խառանցիէն, իպըն Լուհայայէ, Եգիտ իպըն Ապի Հապիպէ, ալ-Ճալալանիէ՝ թէ լսեցի բաղմուլէնէ մը, որ ներկայ եղաւ Եգիպտոսի նըւաճումին, թէ Ամր իպըն ալ-Աս, երբ նըւաճեց Փոսթաթը, զրկեց Ապուալլա իպըն Հուտհաֆա աս-Սահմի դէպի Այն-Շամս: Տիրեց երկրին ու հաշտութիւն կնքեց անոր գիւղերու բնակիչներուն հետ՝ Փոսթաթի նուաճումին հիման վրայ, ու զրկեց խարճա իպըն Հուտհաֆա ալ-Ատուուի դէպի Փայուս ալ-Ալմուհայն, Իսմիմ, ալ-Պաշրուղաղ ու Սայիտի գիւղերը, եւ հրամանը կատարեց: Ղրկեց նաեւ Ուահպ ալ-Ճուհաճի դէպի Դաննիս, Տիմիթ, Դուհա, Տամիրա, Շաթա ու Տիգրալա եւ չինեց Պուսիր, զրկեց Օգլա իպըն Ամր ալ-Ճուհաճի: Կը պատմուի թէ զրկեց իր ազատագործ Վարդան՝ Եգիպտոսի (Գահիրէի) չուկայի իշխանը, երկրին մնացած գիւղերուն վրայ ու տիրեց անոնց:

Ամր իպըն ալ-Ասի Եգիպտոսի նուաճումը շատ լաւ կերպով առաջ տանելով՝ երկիրը դարձուց հողատուրքի ենթակայ (էջ 216-217):

Թրգմ. արաբերէնէ:

Հ. ԱՐԲԱՀԱՄ ԱՂԱՄԵԱՆ

(Շարունակելի)

ՈՒՂԵՒՈՐԻ ՔԵԱՐ

ՈՂՋՈՅՆ ՎԵՆԵՏԻԿ

Ողջո՛յն ժպտուն Վենետիկ,
Ողջո՛յն երազ բեհեղեայ,
Լոյսերուդ մէջ պարուրուած՝
Գիշերաթափառ ո՛վ աննման զիցուհի:
Թողած ամբողջ հիւրընկալ,
Կ'երթամ գրկել ակն ոսկեղող փառքերուն,
Զոր Բիւզանդիոնն իր հրմայքէն պարտը-
Աւանդեց օր մը քեզի, [ւած
Երբ ծովերու մայր՝ Կ'իշխէր յաղթա-
[պանծ,
Հանդերն ամէն մինչեւ ծովերն ասիական:
Ողջո՛յն չըքնաղ Վենետիկ,
Մայր գեղեցիկ արուեստի,
Կախարդանքիդ գերի՝ աչքեր գեղասէր՝
Դարերով քեզ սիրեցին,
Քեզ դանձարան արեւելքի ճոխութեան,
Եւ նրբագործ պատառներու թանկարան,
Ուր միտք, ճաշակ եւ գոյներու մոգու-
[թիւնն
Հողեպարար քաղցրութեան պէս երկնա-
[յին,
Զրվէ՛ք մ'ինչպէս ողորեցին պալատներդ,
Ու դուն դարձար սիրտ եւ կեդրոն շար-
[ժումին:

Ողջո՛յն Վենետ տոժական,
Եւ փառքերու դարաւոր.
Փառքեր ծովու, փառքեր գէնքի աննըկուն,
Պայծառ երկինքըդ կը պնեն աստղերով
Անմահներու, որոնց արիւնն անապակ
Հայրենի դաշն ամրագործեց ու կանգնեց:
Եւ թշնամին բարբարոս
Տորմիղներուդ անկող սարքէն դարհուրած՝
Ճանչցաւ ըզբեղ թաղուհի
Լայնածաւալ ծովերու:

Ողջո՛յն անդարձ մեծութիւն
Եւ աչքերու ծով հեշտանք:

Թերաստուերին մէջ լոյսերուդ ճարման-
[դին՝
Դէմքդ ցանկալի յուշիկ յուշիկ կը խուսէ,
Ու դուն կարծես դարձած անուրջ անէակ՝
Կ'ըլլաս ընտուեր մը կենդանի՝
Անեղր, անափ խաւարին վրայ ծովերու,
Հողույս դէմ կէտ լուսաւոր,
Անառաւօտ, անիրիկուն չողարձակ:

~ ~ ~

ՄՈՂԵՒՈՐԻ ԵՐԳ

Արշալոյս է. ջուրերուն վրայ կը բացուի
Կապուտաղեղ նազանքով
Աչքը մեղույշ առուրան:
Ու զով համբոյրն աստուածաշունչ դե-
[միւրին
Կը փայտայէ ճակատներ:
Կը գիտեմ սա դաշտը շարժուն, անսպառ...
Լեղակ լեղակ ալիքներու կարաւան,
Փրփուր կապած շրթունքին
Կու դան բախել տարփօրէն
Նաւուն լայնի կողերուն
Ու փըշրուած փըրփրերախ
Կ'երթան հեռու ու ծաւալուն ոլորտով՝
Ժեռուտ ամիւն պատմելու
Անցքը թուող կարապին:

Արեւուն տակ կենսութեան
Ծովն ու երկինք իրարու մէջ կը նային,
Ու ես գրկած անհունութիւնն անըստուեր
Կը թեւածեմ ու կ'երգեմ
Սիրոյ նըւազն անսահման,
Որ կը հոսի դաշնաթաւալ ծրփանքով
Անհորիզոն երկինքէն:

Աստղերէն վար կը կաթի
Գիշերային անդորրանք.
Մինչ հեւասպառ կը սուրայ
Կարապը կոյր, անեղրութեան ծարաւով,
Իր ալեհերձ վազը խրոխտ
Շունչ մը կ'ըլլայ, խաւարին կուրծքը թա-
[սուն,

